ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի կասեցում

08.01.2024 թվական **ք. Գյումրի**

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հարությունյան

Անդամներ՝ Իրինա Ջանոյան, Շիրակ Երանոսյան

Քարտուղար՝ Զարիկ Մուրադյան

Նիստի օրակարգ՝

«ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի բացում և գնահատում

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել՝

1. ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ ՍՊԸ-ն

2. Նորմա Քարտ ՍՊԸ-ն

3. Սմարտլակն ՍՊԸ-ն

ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ ՍՊԸ-ի և Սմարտլակն ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի պահանջներին, իսկ Նորմա Քարտ ՍՊԸ-ի կողմից լրացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու «Դիմում հայտարարության» առաջին պարբերության մեջ արձանագրվել է անհամապատասխանություն՝ «Նորմա Քարտ ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար **դատապարտյալների հանդերձանք-ի** կողմից «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/02» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ»:

Հանձնաժողովը արձանագրեց, որ չագերտներում վերցված միտքը շարադրված է ոչ ճիշտ, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար աճուրդը հայտարարվել է A4 ֆորմատի թղթի ձեռքբերման, այլ ոչ թե **դատապարտյալների հանդերձանք-ի ձեռք բերման համար:**

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ Նորմա Քարտ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը համաձայն

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 41-րդ կետի

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի հունվարի 9-ին ժամը 17:30-ին:

Հանձնաժողովի նախագահ՝		Անահիտ Հարությունյան
Անդամներ՝		Իրինա Ջանոյան
		Շիրակ Երանոսյան
Համակարգող քարտուղար՝		Զարիկ Մուրադյան